# Մ Ի Ջ Ա Ն Կ Յ Ա Լ  Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ՀՀ պետական գնումների համակարգի հետազոտություն

Հաշվետվությունը պատրաստեց Արտակ Քյուրումյանը

Երևան

Մարտ 2024

Հապավումներ

| | | |
|---|---|---|
| ԳՀ | - | Գնանշման հարցում |
| ԳՉԾ | - | Գնում չհանդիսացող ծախս |
| ԷԱ | - | Էլեկտրոնային աճուրդ |
| ՀԿ | - | Հասարակական կազմակերպություն |
| ՀՀ | - | Հայաստանի Հանրապետություն |
| ՄԱ | - | Մեկ անձ |
| ՆԳՆ | - | Ներքին գործերի նախարարություն |
| ՏԿԵՆ | - | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն |
| ՍՊԸ | - | Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն |
| PPCM | - | Procurement Planning and Contract Management<br>Գնումների պլանավորման և պայմանագրերի կառավարման էլեկտրոնային համակարգ |

Բովանդակություն

# Contents

1. Ամփոփաթերթ ..... 4
2. Միջանկյալ հաշվետվության նպատակը ..... 5
3. Կատարված աշխատանքներ ..... 5
4. Գնումների համակարգի հետ կապված 2024թ. արձանագրված խնդիրներ ..... 7
4. 1. Տեխնիկական բնութագրերի հետ կապված խնդիրներ ..... 7
4.2. Գնումների կատարումը ..... 8
4.3. Գնման պայմանագրի կատարում. ընդունում-հանձնում ..... 8
4.4. Գնումների թափանցիկությունը ..... 8
4.5. Ներքին հսկողությունը և աուդիտը ..... 10
4.5.1. Դիտարկում ներքին աուդիտ գործառույթի չիրականացման վերաբերյալ ..... 11
5. Արձանագրված զարգացումները և դրանց վերլուծությունը ..... 11
5.1. Դիտարկում նոր օրենք մշակելու վերաբերյալ ..... 12
6. Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունները ..... 13
7. 2024թ. կատարված գնումների վերլուծություն ..... 17
Հավելված 1. Գնումների համակարգի բարելավման հետ կապված առաջարկություններ 22
Հավելված 2. Գնումների համակարգի հետ կապված հարցեր ..... 25
Հավելված 3. Պաշտոնական պարզաբանում պահանջող հարցեր ..... 26
Հավելված 4. Ենթադրամաշնորհային մրցույթի հետ կապված աշխատանքներ ..... 32
Հավելված 5. ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ծրագրի փորձագետի առաջարկությունները ..... 36
Հավելված 6. ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական ՀԿ-ի առաջարկությունները ..... 37

## 1. Ամփոփաթերթ

Հայաստանի Հանրապետության հանրային գնումների համակարգը, որն առանցքային դեր ունի հանրությանը մատուցվող ծառայությունների, մատակարարվող ապրանքների, հանրության համար կատարվող աշխատանքների ձեռքբերման գործում շարունակում է մարտահրավերներ առերեսել:

Շարունակում են գոյություն ունենալ տեխնիկական բնութագրերի հետ կապված խնդիրներ: Պլանշետների ձեռք բերելիս ՀՀ ոստիկանությունը ընթացակարգի հրավերի ապրանքի տեխնիկական բնութագրում ի սկզբանե սահմանել է այնպիսի պարամետրեր, որոնք բնորոշ են կոնկրետ արտադրողի (ապրանքանիշին, ֆիրմային) կոնկրետ արտադրատեսակին:

Շարունակում է լրջագույն խնդիր հանդիսանալ պետական ֆինանսական կառավարման համակարգի ներքին հսկողության և ներքին աուդիտի աշխատանքներում առկա թերությունները, ինչը կարող է հանգեցնել բյուջետային միջոցների նպատակային, արդյունավետ և խնայողական օգտագործման հետ կապված լրջագույն մարտահրավերների: Հաշվեքննիչ պալատն իր մի շարք եզրակացություններում արձանագրել է տարբեր նախարարություններում և գերատեսչություններում ներքին աուդիտի գործառույթի չիրականացման փաստը:

Հասարակական կազմակերպությունները (այսուհետ՝ ՀԿ) կարող են ՀՀ կառավարությանն օժանդակել մշտադիտարկել կատարվող գնումների հետ կապված գործընթացների տարբեր փուլերը: ՀԿ-ները չեն կարող փոխարինել ներքին հսկողություն և ներքին աուդիտ իրականացնող պետական կառույցներին և հսկել ու աուդիտի ենթարկել յուրաքանչյուր տարի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և նրանց ենթակա կառույցների կողմից կատարվող 100 հազարից ավելի գնումները: ՀՀ կառավարությունը պետք է երաշխավորի պետական մարմինների կողմից ներքին հսկողական և ներքին աուդիտի գործառույթների լիարժեք իրականացումը:

Պլանշետ ձեռք բերելիս ՀՀ ոստիկանությունը մատակարարի հետ փոխկապակցված էլեկտրոնիկայի վաճառքի հարթակում առկա նույն պլանշետի գնից ընդհանուր արժեքով 4,280.0 հազար դրամ ավել է վճարել:

Շարունակում են խնդրահարույց մնալ ընդունման-հանձնման գործընթացի հետ կապված աշխատանքները: ՀՀ ոստիկանության կողմից ձեռք բերելիս ոստիկանությունը տեխնիկական բյութագրով սահմանված 155մմ լուսաձերպ ունեցող մեքենաներ փոխարեն ձեռք է բերել 138մմ լուսաձերպ ունեցող մեքենաներ: Էական շեղումներ են եղել նաև մեքենայի քաշի և թափքի դեպքում:

Պատվիրատուների կողմից գնումների պլանավորման և կառավարման էլեկտրոնային համակարգում առկա տեղեկատվությունն ամբողջական չէ:

Պետական ֆինանսական կառավարման համակարգի համար շարունակում է լրջագույն խնդիր մնալ ներքին հսկողության և ներքին աուդիտի

աշխատանքներում առկա թերությունները, ինչը կարող է հանգեցնել բյուջետային միջոցների նպատակային, արդյունավետ և խնայողական օգտագործման հետ կապված լրջագույն մարտահրավերների:

## 2. Միջանկյալ հաշվետվության նպատակը

Միջանկյալ հաշվետվության նպատակն է ներկայացնել նախնական հաշվետվության ներկայացման օրվանից՝ 2023թ. դեկտեմբերի 31-ից մինչև 2024թ. մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքները:

Վերջնական հաշվետվությունը փորձելու է արձանագրել 2024թ. հունիսի վերջին դրությամբ գնումների համակարգում ստեղծված իրավիճակը:

Պատվիրատուների վարքագծում միտումները և նախորդ ժամանակահատվածի համեմատ փոփոխությունները վերհանելու նպատակով ուսումնասիրվել են 2024թ. հունվարի 1-ից մարտի 15 ժամանակահատվածում կատարված գնումները, Հաշվեքննիչ պալատի եզրակացությունները, այլ տվյալներ և տեղեկություններ:

## 3. Կատարված աշխատանքներ

Ծրագրի կողմից պատրաստվել է ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված առաջարկությունների փաթեթ: Փաթեթը ներառել է 7 առաջարկություն, որոնք ներկայացված են հավելված 1-ում:

Ծրագիրը պատրաստել է ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 2 հարցում, որոնք ներկայացված են հավելված 2-ում:

ՀՀ օրենսդրությանը 3 տեսակի գործարքների համապատասխանությունը պարզելու նպատակով ծրագիրը պաշտոնական պարզաբանման վերաբերյալ գրություններ է պատրաստել ՀՀ ֆինանսների նախարարություն: Պաշտոնական պարզաբանում պահանջող հարցերը ներկայացված են հավելված 3-ում:

Առաջարկությունները, հարցումները և պաշտոնական պարզաբանման խնդրանքներն աշխատանքային կարգով ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալին:

«Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական ՀԿ-ն հունվարի 24-ին հայտարարել է փակ մրցույթ լրատվամիջոցների և մարզային ՀԿ-ների համար: Փակ մրցույթի վերաբերյալ հայտարարությունը հասանելի է https://uic.am/18161 հղումով: Հավելված 4-ում ներկայացված է ենթադրամաշնորհային մրցույթի հետ կապված աշխատանքների ժամանակագրությունը:

2024թ. փետրվարի 16-ին ծրագրի փորձագետը մասնակցել է Համաշխարհային բանկի խորհրդատուների կողմից «Պետական գնումներ» ծրագրի շրջանակներում պատրաստված հաշվետվության առցանց ներկայացմանը:

2024թ. փետրվարի 29-ին ՀՀ ֆինանսների նախարարությունը https://www.e-draft.am/projects/6947/about էջում հրապարակել է «ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի n 235-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագծի հիմնավորման համաձայն «որոշման նախագծի ընդունումը նպատակ ունի շարունակաբար բարելավել պայմանագրերի կատարման նկատմամբ հանրային հսկողության իրականացման գործիքակազմը:»

2024թ. մարտի 13-ին ծրագրի փորձագետն առաջարկություն է ներկայացրել քննարկման առարկա նախագծի վերաբերյալ, որը հասանելի է https://www.e-draft.am/projects/6947/digest հղումով: Ծրագրի փորձագետի առաջարկությունը ներառվել է այս հաշվետվության հավելված 5-ում: ՀՀ ֆինանսների նախարարությունը տրամադրել է հետևյալ եզրակացությունը. «Ընդունվել է ի գիտություն: Առաջարկության քննարկման արդյունքների մասին կտեղեկացնենք՝ արդյունքները նշված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով»:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հանրային քննարկման ներկայացված նախագծի վերաբերյալ առաջարկություններ է ներկայացրել նաև «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական ՀԿ-ն: «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական ՀԿ-ի առաջարկությունները ներկայացված են հավելված 6-ում:

2024թ. մարտի 18-ին, ՀՀ ֆինանսների նախարարության հրավերով ծրագրի փորձագետը մասնակցել է էլեկտրոնային նոր համակարգի գնման մրցույթի նախաորակավորման ընթացակարգի մասին հայտարարության առցանց քննարկմանը:

2024թ. մարտի 21-ի միջոցառումների կազմակերպման «Բյուրո» ընկերության տարածքում կազմակերպվել է ենթադրամաշնորհային մրցույթի հաղթողների ներկայացման արարողությունը:

2024թ. մարտի 23-ին Դանիել Իոաննիսյանը, Սևադա Ղազարյանը և Արտակ Քյուրումյանը ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանի և ՀՀ ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության պետ Սերգեյ Շահնազարյանի հետ քննարկել են 2024թ. փետրվարի 29-ին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից https://www.e-draft.am/projects/6947/about էջում հրապարակված «ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի n 235-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական ՀԿ-ի ներկայացրած առաջարկությունները:

## 4. Գնումների համակարգի հետ կապված 2024թ. արձանագրված խնդիրներ

### 4. 1. Տեխնիկական բնութագրերի հետ կապված խնդիրներ

2023թ. նոյեմբերի 1-ից 2024թ. հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՆԳՆ պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման գործունեության 2023թ. հունվարի 1-ից սեպտեմբերի 30-ն ընդգրկող ժամանակաշրջանի հաշվեքննության արդյունքում[1] Հաշվեքննիչ պալատն արձանագրվել է, որ 2023թ. հուլիսի 24-ին «ԷԼ մարկետ» ՍՊԸ-ի հետ կնքած, 15,759.996 հազ. դրամ ընդհանուր արժեքով, «SAMSUNG Galaxy Tab Active3 (T-575)» մոդելի 40 պլանշետ ձեռք բերելու վերաբերյալ «ՀՀ ՆԳՆ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՊԼԱՆՇԵՏ/2023-6» պայմանագրի, ընթացակարգի հրավերում զետեղված պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրում ի սկզբանե սահմանվել են այնպիսի պարամետրեր, որոնք բնորոշ են կոնկրետ արտադրողի (ապրանքանիշին, ֆիրմային) կոնկրետ արտադրատեսակին: Մասնավորապես, տեխնիկական բնութագրում նշվել է, որ պահանջվող պլանշետը պետք է ունենա «S-pen», որը համաձայն պաշտոնական տվյալների հանդիսանում է բացառապես «Սամսունգ գրուպ» հարավկորեական կոնգլոմերատի կազմում գործող «Սամսունգ էլեկտրոնիկս» ընկերության գրանցված ապրանքատեսակ: Արձանագրվել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների հետ: Ավելին, արձանագրվել է, որ «SAMSUNG Galaxy Tab Active3 (T-575)» պալնշետների համար տեխնիկական բնութագրով պատվիրատուն պահանջել է «ջրում պաշտպանվածությունը 1,5 մետրի դեպքում ոչ պակաս, քան 30 րոպե», այն դեպքում, երբ ըստ արտադրող ընկերության տեխնիկական բնութագրի, տվյալ պլանշետների, համար այդ չափորոշիչը, ըստ էության կազմում է՝ «ոչ ավել, քան 30 րոպե»:

ՀՀ ՆԳՆ-ն արձագանքել է Հաշվեքննիչ պալատի դիտարկմանը: ՆԳՆ արձագանքը ներկայացվում է ստորև:

«ՀՀ ՆԳՆ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՊԼԱՆՇԵՏ/2023-6» ծածկագրով մրցույթը 2023 թվականի հունիսի 19-ին արդեն իսկ հրապարակված է եղել և պայմանագրի համաձայնագիրը 2023 թվականի սեպտեմբերի 07-ին կնքվել է, իսկ ՀՀ հաշվեքննիչ պալատի 2023 թվականի հուլիսի 27-ի թիվ 102-Ա որոշման հիման վրա ՀՀ ներքին գործերի նախարարությունում իրականացված 2023 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը ստացվել է 2023 թվականի հոկտեմբերի 16-ին:

[1] Հաշվեքննիչ պալատի 2024թ. հունվարի 25-ի թիվ 10-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունում 2023 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննությն արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացություն»: Հասանելի է https://armsai.am/hy/current-conclusions էջում:

Հաշվի առնելով վերոգրյալը հայտնում եմ, որ ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված անհամապատասխանությունները ներառվել են «ՀՀ ՆԳՆ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՊԼԱՆՇԵՏ/2023-6» ծածկագրով մրցույթի տեխնիկական բնութագրում:

Հայտնում եմ, որ ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված խախտումները մեր կողմից ընդունվել են ի գիտություն հետագայում նման դեպքերը բացառելու համար:

### 4.2. Գնումների կատարումը

2023թ. նոյեմբերի 1-ից 2024թ. հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՆԳՆ պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման գործունեության 2023թ. հունվարի 1-ից սեպտեմբերի 30-ն ընդգրկող ժամանակաշրջանի հաշվեքննության արդյունքում Հաշվեքննիչ պալատն արձանագրվել է, որ 2023թ. հուլիսի 24-ին «ԷԼ մարկետ» ՍՊԸ-ի հետ կնքած, 15,759.996 հազ. դրամ ընդհանուր արժեքով, «SAMSUNG Galaxy Tab Active3 (T-575)» մոդելի 40 պլանշետ ձեռք բերելու վերաբերյալ «ՀՀ ՆԳՆ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՊԼԱՆՇԵՏ/2023-6» պայմանագրի դեպքում ՀՀ ոստիկանությունը պլանշետները ձեռք է բելեր յուրաքանչյուրը 393.99 հազար դրամ արժեքով, այն դեպքում, երբ «Էլ մարկետ» ՍՊԸ հետ փոխկապակցված «Էլդորադո» էլեկտրոնիկայի հարթակում նույն մոդելի պլանշետը վաճառվում է 286.9 հազար դրամ մանրածախ արժեքով: Հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ ՀՀ ոստիկանությունը վճարել է 37.3% բարձր գին, որն առաջացրել է 4280.0 հազար դրամի վատնում:

### 4.3. Գնման պայմանագրի կատարում. ընդունում-հանձնում

2023թ. նոյեմբերի 1-ից 2024թ. հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՆԳՆ պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման գործունեության 2023թ. հունվարի 1-ից սեպտեմբերի 30-ն ընդգրկող ժամանակաշրջանի հաշվեքննության արդյունքում Հաշվեքննիչ պալատը մի շարք խնդիրներ է արձանագրվել «Չեզ ավտո» ՍՊԸ-ի հետ 2023թ. հունիսի 7-ին կնքված «սեդան» թափքով «Շկոդա Սուպերբ» մակնիշի 65 մեքենային ձեռքբերման 1,177,800.0 հազար դրամ գումարով պայմանագրի կատարման դեպքում: Մասնավորապես մեքենայի ճանապարհային լուսածերպը տեխնիկական բյութագրով սահմանված 155մմ փոխարեն եղել է 138մմ, մեքենայի քաշը 1460կգ փոխարեն եղել է 1576կգ, «սեդան» տեսակի թափքի փոխարեն մատակարարված մեքենաներն ունեցել են «լիֆթբեկ» տեսակի թափք:

### 4.4. Գնումների թափանցիկությունը

Գնումների թափանցիկությունը շարունակում է խնդրահարույց լինել:

2023թ. նոյեմբերի 1-ից 2024թ. հունվարի 31-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում (այսուհետ՝ ՏԿԵՆ) 2023թ.

պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության՝ 2023թ. հունվարի 1-ից սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածի հաշվեքննության արդյունքում[2] Հաշվեքննիչ պալատը եզրակացրել է, որ ուսումնասիրված 58,827,639.9 հազ.դրամ ընդհանուր գումարով 179 գնման պայմանագրերից 58,713,982.1 հազ. դրամ ընդհանուր գումարով 141-ի դեպքում (պայմանագրերի 78.8% կամ գումարային արտահայտությամբ 99.8% դեպքում) պայմանագրերի համար կատարողականները հիմնավորող փաստաթղթերը չեն հրապարակվել գնումների պլանավորման և պայմանագրերի կառավարման էլեկտրոնային համակարգում (այսուհետ՝ PPCM[3]): Հաշվեքննիչ պալատը ՏԿԵՆ-ից հայցել է PPCM համակարգում վերոնշյալ պայմանագրերի շրջանակում չհրապարակված փաստաթղթերը, սակայն դրանք մինչև սույն ընթացիկ եզրակացության հաստատումը 34,881,616.0 հազ.դրամ (58.3%) գումարով պայմանգրերի համար չեն տրամադրվել :

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 110-րդ կետի համաձայն էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ համակարգ ներմուծելով հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ հաստատված եզրակացությունը:

Հաշվեքննիչ պալատն ուսումնասիրել է կազմակերպված գնման գործընթացները, որոնց մասով գնումների PPCM համակարգում կատարողական ակտերի վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրություններ առկա չեն:

Հաշվեքննության ընթացքում ՏԿԵՆ կողմից 27.09.2023թ. ներկայացվել է պարզաբանում, համաձայն որի. «*Այն դեպքում, երբ պայմանագիրը կնքվում է մեկ տարուց ավելի ժամկետով, առկա է տեխնիկական խնդիր: Հաջորդ տարվա պետական բյուջեի միջոցների հաշվին նախորդ տարում կնքված պայմանագիրը PPCM համակարգ կարող է մուտքագրվել միայն թղթային եղանակով, որի դեպքում մատակարարը / կատարողը / կապալառուն տեխնիկական հնարավորություն չունի կատարողականը էլեկտրոնային եղանակով ներկայացնելու: Տվյալ դեպքում առաջանում է անհամապատասխանություն պայմանագրով սահմանված դրույթների և փաստացի առկա հնարավորությունների հետ կապված»:*

Պարզաբանում ստանալու նպատակով Հաշվեքննիչ պալատը հարցում է ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն[4]: Հաշվեքննիչ պալատը պարզաբանում է ստացել ՀՀ ֆինանսների նախարարությունից[5], որի համաձայն

[2] Հաշվեքննիչ պալատի 2024թ. հունվարի 30-ի թիվ 18-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում 2023 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության վերաբերյալ ընթացիկ եզրակացություն»: Հասանելի է https://armsai.am/hy/current-conclusions էջում:

[3] Procurement Planning and Contract Management

[4] Հաշվեքննիչ պալատի 2023թ. նոյեմբերի 6-ի թիվ ՀՊԵ/01/840-2023 գրություն:

[5] ՀՀ ֆինանսների նախարարության 2023թ. նոյեմբերի 20-ի թիվ 01/26-1/22259-2023 գրություն:

ՏԿԵՆ նշած տեխնիկական խնդիրը բացակայում է: ՀՀ ֆինանսների նախարարությունը նաև նկարագրել է իրավական ակտի պահանջի կատարումն ապահովող ընթացակարգը: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված պարզաբանումների հետ կապված ՏԿԵՆ-ը առարկություններ չի ներկայացրել:

Չնայած գնումների էլեկտրոնային համակարգի հետ կապված բազմաթիվ դժգոհություններին և այդ հանգամանքով պայմանավորված էլեկտրոնային գնումների նոր համակարգ ստեղծելու վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության հայտարարություններին Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի «Էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկում» միջոցառման (ծրագրի դասիչ՝ 1108, միջոցառման դասիչ՝ 11002) 2023թ. նոյեմբերի 1-ից 2024թ. հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացված 2023թ. հունվարի 1-ից սեպտեմբերի 30-ը ընդգրկող ժամանակահատված հաշվեքննության դեպքում[6] Հաշվեքննիչ պալատը խեղաթյուրում, անհամապատասխանություն և այլ փաստեր չեն հայտնաբերվել:

### 4.5. Ներքին հսկողությունը և աուդիտը

Պետական ֆինանսական կառավարման համակարգի համար շարունակում է լրջագույն խնդիր մնալ ներքին հսկողության և ներքին աուդիտի աշխատանքներում առկա թերությունները, ինչը կարող է հանգեցնել բյուջետային միջոցների նպատակային, արդյունավետ և խնայողական օգտագործման հետ կապված լրջագույն մարտահրավերների:

Հաշվեքննիչ պալատն իր մի շարք եզրակացություններում արձանագրել է տարբեր նախարարություններում և գերատեսչություններում ներքին աուդիտի գործառույթի չիրականացման փաստը: 2023թ. նոյեմբերի 1-ից 2024թ. հունվարի 31-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում 2023թ. պետական բյուջեի ինն ամիսների՝ 2023թ. հունվարի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության հաշվեքննության արդյունքում եզրակացրել[7], է որ նախարարությունում առկա չէ ներքին աուդիտի ստորաբաժանում և չի իրականացվել 2022թ. պետական բյուջեի ներքին աուդիտ, ինչը չի համապատասխանում «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի դրույթներին:

[6] Հաշվեքննիչ պալատի 2024թ. հունվարի 25-ի թիվ 7-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2023 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացություն»: Հասանելի է https://armsai.am/hy/current-conclusions էջում:
[7] Հաշվեքննիչ պալատի 2024թ. հունվարի 30-ի թիվ 16-Ա որոշմամբ հաստատված «ՀՀ էկոնոմիկայի նախարարության 2023 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացություն»: Հասանելի է https://armsai.am/hy/current-conclusions էջում:

### 4.5.1. Դիտարկում ներքին աուդիտ գործառույթի չիրականացման վերաբերյալ

Հասարակական կազմակերպությունները (այսուհետ՝ ՀԿ) կարող են ՀՀ կառավարությանն օժանդակել մշտադիտարկել կատարվող գնումների հետ կապված գործընթացների տարբեր փուլերը: ՀԿ-ները չեն կարող փոխարինել ներքին հսկողություն և ներքին աուդիտ իրականացնող պետական կառույցներին և հսկել ու աուդիտի ենթարկել յուրաքանչյուր տարի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և նրանց ենթակա կառույցների կողմից կատարվող 100 հազարից ավելի գնումները: ՀՀ կառավարությունը պետք է ձևավորի բաց, թափանցիկ, հաշվետու, պատասխանատու, մրցակցային, ճկուն գնումների համակարգ, որը կերաշխավորի հանրային միջոցների նպատակային, արդյունավետ և խնայողական օգտագործումը և պետք է երաշխավորի պետական մարմինների կողմից ներքին հսկողական և ներքին աուդիտի գործառույթների լիարժեք իրականացումը:

## 5. Արձանագրված զարգացումները և դրանց վերլուծությունը

ՀՀ կառավարության 2024թ. փետրվարի 1-ի նիստի, ժամանակ արձագանքելով ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի հայտարարությանը, որ գնումների մասին օրենսդրության լավարկումները արդքան էլ տեսանելի չեն, ՀՀ ֆինանսների նախարարը հայտարարել է, որ 2024թ. սկզբից կառավարությունը նախաձեռնել է գնումների մասին նոր օրենքի պատրաստման գործընթաց[8]: Վարչապետն առաջարկել է գնումների մասին լավարկման ինստիտուցիոնալ մեխանիզմ ստեղծել, որը կգործի անկախ հանձնարարականներից:

Ֆինանսների նախարարը տեղեկացրել է, որ 2024թ. սկզբից նախաձեռնել է գնումների մասին նոր օրենքի պատրաստման գործընթաց: Նախարարությունը գրություն է ուղարկել բոլոր շահագրգիռ նախարարություններին, խնդրելով ներկայացնել իրենց դիտարկումները և առաջիկայում նախատեսում են լայն խորհրդակցություններ սկսել պետական մարմինների, ՀԿ-ների և տնտեսվարողների հետ, որպեսզի նախանշեն այն բոլոր փոփոխությունները, որոնք ուզում են արտացոլել նոր օրենքում: ՀՀ ֆինանսների նախարարը հավելել էր, որ իրականացվելու են ֆունդամենտալ քայլեր, որոնց մասին պարբերաբար կզեկուցվի վարչապետին:

Ն. Փաշինյանը նշել է, որ գնումների ընթացակարգը միշտ չէ, որ համապատասխանում է ժամանակակից գործելակարգերին և ժամանակակից բիզնես հարաբերություններին: Վարչապետը նաև հավելել է, որ կառավարությունը երբեմն օգտակար գործողության ցածր գործակից ունեցող գործողություններ է կատարում և լրացուցիչ լարվածություն է ստեղծում: Փոխվարչապետ Տ. Խաչատրյանը նշել է, որ պետք է ուշադրություն դարձնել ոչ միայն գնման

[8] ՀՀ վարչապետի աշխատակազմի մամուլի ծառայության հաղորդագրություն: (2024թ.): Կառավարությունը 2023 թվականին իրականացրել է սուբվենցիոն ծրագրերի ռեկորդային համաֆինանսավորում՝ ավելի քան 33 միլիարդ դրամ: 1 փետրվարի 2024թ.: Հասանելի է https://www.primeminister.am/hy/press-release/item/2024/02/01/Cabinet-meeting/ էջում:

գործընթացը և գնման մրցույթը կազմակերպելու, այլ նաև գնման ընթացքը կառավարելու հարցերին:

2024թ. մարտի 8-ին Հանրային հեռուստատեսության լուրերի ալիքով հեռարձակվել է տեսանյութ, որի ժամանակ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալը իրազեկել է գնումների մասին նոր օրենքի մշակման մասին[9]: Նախարարի տեղակալը հայտարարել է, որ գնումների մասին նոր օրենքի հիմքում կդրվի ճկունության և հետագծելիության սկզբունքը: ՀՀ ֆինանսների նախարարությունը գործընկեր նախարարությունից արդեն իսկ ստացել է կարծիքներ: Գնումների ընթացակարգերը վերանայելու անհրաժեշտությունն առաջացել է Հայաստանում կապիտալ ծրագրերի, դրանց ֆինանսավորման ծավալների մեծացմանը զուգահեռ: ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալը հայտարարել էր, որ թափանցիկությունը բացարձակ արժեք է և կառավարությունն ավելի թափանցիկ է դարձնելու գնումները, ավելի շատ ճկունության դիմաց: Տեսանյութում ընդգծվել է, որ ՀՀ վարչապետը նշել է, որ գնումների ընթացակարգի պատճառով ընկերությունները հաճախ խուսափում են աշխատել պետական հատվածի հետ: ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալն ընդգծել է, որ Համաշխարհային բանկի և Ասիական Զարգացման բանկի գործընկերները նշում են, որ արդյունավետ համակարգերը ոչ թե այն համակարգն է, որն ամեն ինչ կանխատեսում է, այլ այն, որը կարողանում է անընդհատ արձագանքել:

2024թ. մարտի 31-ի դրությամբ օրենքի նախագիծ, հայեցակարգ, ուսումնասիրություն կամ որևէ այլ փաստաթուղթ չի հրապարակվել: Եղել են բանավոր հայտարարություններ: Սա պետք է անհանգստացնող լինի այն առումով, որ մենք ՀՀ ֆինանսների նախարարության հետ համագործակցում ենք, սակայն այդ տեղեկատվությունն իմանում ենք լուրերից: Սա ազդակ է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունն տրամադրված չէ համագործակցել:

### 5.1. Դիտարկում նոր օրենք մշակելու վերաբերյալ

2000թ. ի վեր Հայաստանի իշխանությունները «Գնումների մասին» 4 օրենք են ընդունել: Օրենքներից ոչ մեկը չի ապահովել մրցակցային, հավասար և արդար պայմաններ, թափանցիկության և հաշվետվողականության անհրաժեշտ մակարդակ: Ինչպես նախկինում, գործող օրենքի դեպքում ևս խնդիրը պայմանավորված է ոչ թե օրենքի կարգավորումների անկատարությամբ, այլ դրա կիրարկման հետ կապված խնդիրներով:

Օրինակ, ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրության համաձայն[10] նախարարությունը պետք է իրականացնի գնումների գործընթացների՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխանատության գնահատում: Սակայն հանրային դաշտում առկա չեն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից գնումների

[9] Հանրային հեռուստատեսության լուրերի ալիք: (2024թ.): Գնումների ընթացակարգերի վերջին քննադատությունների ֆոնին՝ ոլորտը կարգավորող նոր օրենք է մշակվում: Հասանելի է https://www.youtube.com/watch?v=R4CKJzEWgek էջում:
10 ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» №743-Լ որոշում: Հասանելի է https://minfin.am/hy/page/kanonadrutyuny/ էջում:

գործընթացներին, առանձին պատվիրատուների գործողություններին տված գնահատականներ:

### 6. Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունները

2023թ. հունվարի 23-ից մինչև 2024թ. փետրվարի 29-ը Հաշվեքննիչ պալատը հաշվեքննության է ենթարկել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2022թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի ֆինանսատնտեսական գործունեությունը[11]:

Հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 20-ի №228-Ն հրամանի[12] հավելվածի 1-ին և 2-րդ կետերի պահանջների հետ:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշման[13] հավելվածի № 1 109-րդ կետի համաձայն «աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Սույն կետում նշված անձը պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում են պայմանագրի պայմաններին կամ մատակարարված ապրանքի որակական հատկանիշները գերազանցում են պայմանագրով սահմանված պահանջները՝ ապահովելով կարիքի բավարարումը:»: Համաձայն նույն հավելվածի 111-րդ կետի՝ «սույն կարգի 109-րդ կետով նախատեսված գրավոր եզրակացության ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:»:

ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 20-ի №228-Ն հրամանի հավելվածի 1-ին և 2-րդ կետերի՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացության.

- 1-ին բաժնում լրացվում են մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների անվանումները:

- 2-րդ բաժնում լրացվում են մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը:

---

[11] Հաշվեքննիչ պալատի 2024թ. փետրվարի 29-ի թիվ 28-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացություն»: Հասանելի է https://armsai.am/hy/current-conclusions էջում:

[12] ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 20-ի «Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացության ձևը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի N 180-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 228-Ն հրաման

[13] ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշում

- «Քանակական ցուցանիշը ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի» բաժնում լրացվում են պայմանագրով նախատեսված և տվյալ ժամանակահատվածում ձեռքբերման ենթակա ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների քանակական ցուցանիշները:

- «Քանակական ցուցանիշը փաստացի» բաժնում լրացվում են տվյալ ժամանակահատվածում պատվիրատուի ընդունմանը ներկայացված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների քանակական ցուցանիշները:

2022թ. գործող 57 կապալի պայմանագրերով, պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ կազմված եզրակացության 1-ին և 2-րդ բաժիններում չեն նշվել կատարված աշխատանքների անվանումները և տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը, իսկ «քանակական ցուցանիշը ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի» և «քանակական ցուցանիշը փաստացի» բաժիններում լրացվել են ՀՀ դրամով արտահայտված գումարներ: Օրինակ, «Քանակական ցուցանիշը ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի» բաժնում լրացվել է «173,000,000 դրամ», իսկ «Քանակական ցուցանիշը փաստացի» բաժնում լրացվել է «19,176,131 դրամ»:

Հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 20-ի №230-Ն հրամանի[14] Հավելվածի 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերի պահանջների հետ:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշման Հավելված 1-ի 108-րդ կետի համաձայն պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, որի ձևը սահմանում է ՀՀ ֆինանսների նախարարը:

ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 20-ի №230-Ն հրամանի[15] հավելվածի 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերի պահանջի համաձայն պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրության.

- 1-ին բաժնում լրացվում են մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների անվանումները:
- 2-րդ բաժնում լրացվում են մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը:

[14] ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 20-ի «Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրության ձևը հաստատելու եվ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի N 179-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 230-Ն հրաման

[15] ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 20-ի «Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրության ձևը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի N 179-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 230-Ն հրաման

- «Քանակական ցուցանիշը ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի» բաժնում լրացվում են պայմանագրով նախատեսված և տվյալ ժամանակահատվածում ձեռք բերման ենթակա ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների քանակական ցուցանիշները:
- «Քանակական ցուցանիշը փաստացի» բաժնում լրացվում են տվյալ ժամանակահատվածում պատվիրատուի ընդունմանը ներկայացված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների քանակական ցուցանիշները:
- «Կատարման ժամկետը ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի» բաժնում նշվում է տվյալ ապրանքի մատակարարման, ***աշխատանքի*** կատարման կամ ծառայության մատուցման համար պայմանագրով սահմանված ժամկետը:
- «Կատարման ժամկետը փաստացի» բաժնում նշվում է ***տվյալ*** ապրանքի մատակարարման, ***աշխատանքի*** կատարման կամ ծառայության մատուցման փաստացի ժամկետը:
- «Վճարման ենթակա գումարը» բաժնում նշվում է տվյալ ժամանակահատվածում փաստացի մատակարարված ապրանքի, կատարված աշխատանքի և մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը:

2022թ. կազմված, պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրության 1-ին և 2-րդ բաժիններում չեն նշվել ըստ փուլի կատարված աշխատանքների անվանումները և տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը, իսկ «քանակական ցուցանիշը ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի» և «քանակական ցուցանիշը փաստացի» բաժիններում լրացվել են «1» թիվը: Օրինակ,

- Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների անվանման փոխարեն նշվել է «միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքներ»:
    - Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքի տեղը նշվել է «Հայաստանի Հանրապետության կոտայքի մարզի գ. Ջրառատի միջնակարգ դպրոցի տիպային շենքի կառուցման աշխատանքներ: ***Պատերի, միջնորմերի շարվածք, երեսապատման և տանիքային աշխատանքներ***»: Ընդ որում, նշվածը շարադրանքը չի համապատասխանում նույնիսկ այս հանձնման-ընդունման արձանագրության համար հիմք հանդիսացած պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացության «մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը» բաժնի շարադրանքի հետ, որտեղ նշվել է «Հայաստանի Հանրապետության կոտայքի մարզի գ. Ջրառատի միջնակարգ դպրոցի տիպային շենքի ***կառուցման միաձույլ ե/բ աշխատանքներ***»:

- «Քանակական ցուցանիշը ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի» բաժնում լրացվել է «1.00»:
- «Քանակական ցուցանիշը փաստացի» բաժնում լրացվել է «1.00»:

Հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ փաստացի ՀՀ օրենսդրությամբ սահմանված որևէ փաստաթղթով «չեն արտացոլվել այն աշխատանքների անվանումները և քանակները (ծավալները), որոնց կատարման վարբերյալ պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչ(ներ)ը տվել են գրավոր դրական եզրակացությունը, և որոնք կապալառուն հանձնել է պատվիրատուին, ինչպես նաև վճարման ենթակա ընդհանուր գումարի բացվածքը ըստ աշխատանքների»:

ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/4-2 պայմանագրի օրացուցային գրաֆիկով սահմանվել է աշխատանքների կատարման 3 փուլ (տարվա ընթացքում փոփոխվել և սահմանվել է մեկ փուլ)՝ համապատասխան գումարներով, սակայն հանձնման-ընդունման արձանագրությունները կազմվել են ոչ թե այդ փուլերի համար՝ դրանց կատարման համար սահմանված ժամկետի ավարտից հետո և սահմանված գումարի չափով, այլ յուրաքանչյուր ամիս, իսկ նոյեմբեր ամսին երկու անգամ, և օրացուցային գրաֆիկով սահմանված գումարից տարբերվող գումարներով: 23 պայմանագրերերի դեպքում առկա է անհամապատասխանություն 3.4.5 կետի պահանջի հետ:

ՀՀ կառավարության 2017թ. №526-Ն որոշման թիվ 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի՝ «Պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ՝…պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ…»:

23 պայմանագրերի 3.1.2 կետի համաձայն «Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:»: Նույն պայմանագրերերի 3.4.5 կետի համաձայն կապալառուն պարտավոր է «Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:»: Նույն պայմանագրերի 6.2 կետի համաձայն «Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:»:

ա) Պայմանագրերից 21-ի դեպքում 2022թ. համաձանագրերի օրացուցային գրաֆիկներով նախատեսված ժամկետներում աշխատանքները չեն կատարվել, սահմանվել են աշխատանքների կատարման նոր ժամկետներ, սակայն չեն հաշվարկվել և Կապալառուներից չեն գանձվել պայմանագրերի 6.2 կետով նախատեսված տույժը:

բ) 4 պայմանագրի դեպքում աշխատանքները սահմանված ժամկետում չեն ավարտվել, աշխատանքների կատարման ընդհանուր ժամկետը երկարաձգվել է, սակայն չեն հաշվարկվել և Կապալառուներից չեն գանձվել պայմանագրերի 6.2 կետով նախատեսված տույժը:

Հաշվեքննիչ պալատի հաշվարկների համաձայն, ժամկետանց օրերի համար պակաս են հաշվարկել և Կապալառուներին վճարվող գումարներից պակաս են հաշվանցել 142,546.85 հազար դրամ տույժ: Նշված անհամապատասխանությունը հանգեցրել է խեղաթյուրման, որը Հաշվեքննիչ պալատը ներկայացրել է «Խեղաթյուրումների մասին գրառումներ» բաժնի 1-ին կետի բ) ենթակետում:

Կատարված հաշվեքննությունների արդյունքում պալատն արձանագրել է մի շարք այլ անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ:

## 7. 2024թ. կատարված գնումների վերլուծություն

Հաշվետվությունը պատրաստելիս վերլուծվել է 2024թ. հունվարի 1-ից մարտի 15-ն ընկած ժամանակահատվածում կատարված գնումները:

Armeps համակարգի համաձայն 2024թ. հունվարի 1-ից մարտի 15-ն ընկած ժամանակահատվածում կնքվել է 78.8 մլրդ դրամ արժեքով 4309 պայմանագիր: Ըստ ընթացակարգերի գնումների ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է գծապատկեր 1-ում:

**Գծապատկեր 1. 2024թ. հունվարի 1-ից մարտի 15-ն ժամանակահատվածում կատարված գնումների ծավալներն ըստ ընթացակարգերի (մլրդ դրամ)**




*Աղբյուր. Armeps*

Պատվիրատուները շարունակում են ինտենսիվ կերպով օգտագործել մեկ անձ ընթացակարգը (այսուհետ՝ ՄԱ): Բոլոր գնումների 31.0 տոկոսը՝ 24.5 մլրդ դրամ, կատարվել է ՄԱ ընթացակարգով:

Բաց մրցույթ (այսուհետ՝ ԲՄ) և հրատապ բաց մրցույթ (այսուհետ՝ ՀԲՄ) ընթացակարգերով գնումների ծավալը կազմել է կատարվող բոլոր գնումների 32.5 տոկոսը, համապատասխանաբար 12.3 մլրդ դրամ և 13.4 մլրդ դրամ:

Պատվիրատուները շարունակում են հաճախ օգտագործել «Գնումների մասին» օրենքով չնախատեսված գնում չհանդիսացող ծախս «ընթացակարգով» գնումները (այսուհետ՝ ԳՉԾ): Վերը նշված ժամանակահատվածում կատարված գնումների 10.9 տոկոսը՝ 8.6 մլրդ դրամ, կատարվել է ԳՉԾ «ընթացակարգով»:

ԲՄ ընթացակարգն օգտագործվել է 71, ՀԲՄ-ն՝ 77 դեպքում (գծապատկեր 2):

**Գծապատկեր 2. 2024թ. հունվարի 1-ից մարտի 15-ն ժամանակահատվածում կատարված գնումների քանակներն ըստ ընթացակարգերի (պայմանագիր)**




*Աղբյուր. Armeps*

Գծապատկեր 1-ից և 2-ից ակնհայտ է, որ ԷԱ և ՄԱ ընթացակարգերի մոտավորապես հավասար քանակների դեպքում (1567 և 1578) գնումների ծավալներն էականորեն տարբերվել են (14.4 մլրդ դրամ և 24.5 մլրդ դրամ) հօգուտ ՄԱ-ի: Տարբեր ընթացակարգերով գնումների ծավալների տեսակարար կշիռներն ընդհանուրի մեջ ներկայացված են գծապատկեր 3-ում:

**Գծապատկեր 3. 2024թ. հունվարի 1-ից մարտի 15-ն ժամանակահատվածում կատարված գնումների ծավալների տեսակարար կշիռները**




*Աղբյուր. Armeps*

Armeps-ի համաձայն 2024թ. հունվարի 1-ից մարտի 15-ն ընկած ժամանակահատվածում կատարված 4309 գնումների 73% կատարվել է էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ ԷԱ) և ՄԱ ընթացակարգով (համապատասխանաբար 36.3% և 36.6%), այն դեպքում, երբ ԲՄ և ՀԲՄ ընթացակարգերով կատարվել է գնումների 3.4%, համապատասխանաբար 1.6% և 1.8% (գծապատկեր 4):

**Գծապատկեր 4. 2024թ. հունվարի 1-ից մարտի 15-ն ժամանակահատվածում կատարված գնումների պայմանագրերի տեսակարար կշիռներն ըստ ընթացակարգերի**




Զարմանալիորեն ԲՄ և ՀԲՄ ընթացակարգերով գնումների դեպքում հաշվարկային տնտեսումը կազմել է պայմանագրի ընդհանուր գումարի 0.7% և 0.0% : Պակաս մրցակցային ԳՀ ընթացակարգով գնումների դեպքում հաշվրկային տնտեսումը կազմել է պայմանագրի ընդհանուր գումար 3.0%, իսկ ոչ մրցակցային ՄԱ ընթացակարգի դեպքում՝ 3.9%:

**Գծապատկեր 5. 2024թ. հունվարի 1-ից մարտի 15-ն ժամանակահատվածում կատարված գնումների հաշվարկային տնտեսումները (տնտեսումը որպես պայմանագրի ընդհանուր գումարի տոկոս)**




*Աղբյուր. Armeps*

Ներկայացված տվյալների հիման վրա պետք է ենթադրել, որ բոլոր գնումները ՄԱ ընթացակարգով կատարելու դեպքում կարել էր ապահովել

լրացուցիչ 1.7 մլրդ դրամի տնտեսում[16]: Այն հանգամանքը, որ գնումների ոչ մրցութային եղանակն ավելի մեծ տնտեսում է ապահովում, քան մրցութային եղանակը տրամաբանական չէ և համահունչ չէ գնումների ոլորտը կարգավորող օրենսդրության փիլիսոփայությանը:

[16] 2024թ. հունվարի 1-ից մարտի 15-ը ժամանակահատվածում կատարված 4309 գնման դեպքում աշվարկային տնտեսումը կազմել է 1.4 մլրդ դրամ: Եթե բոլոր գնումները կատարվեին ՄԱ ընթացակարգով և հաջողվեր ապահովել հաշվարկային տնտեսման նույն 3.9% մակարդակը, ապա խնայողությունը կկազմեր 3.1 մլրդ դրամ, կամ 1.7 մլրդ դրամով ավելի (ինչը տրամաբանական չէ):

## Հավելված 1. Գնումների համակարգի բարելավման հետ կապված առաջարկություններ

### Առաջարկություն №1

**Գնումների պլաններում կատարվող փոփոխություններին գնահատական տալու վերաբերյալ**

Գնումների պլաններում պատվիրատուների կողմից հաճախ կատարվում են մեծ թվով և ծավալով փոփոխություններ, ինչը հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական կառավարումը դարձնում է պակաս կանխատեսելի և հուսալի:

Առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող գնումների տարեկան հաշվետվություններում տեղ հատկացնել գնումների պլաններում կատարվող փոփոխությունների հաճախականությանը, պարբերականությանը, թվաքանակներին և ծավալներին և հրապարակել ամենից մեծ ծավալներով, քանակներով և ամենից հաճախ և ամենից հազվադեպ փոփոխություններ կատարած առավել մեծ ծավալներով գնումներ կատարող 10 պատվիրատուների անունները:

### Առաջարկություն №2

**Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում սյուն ավելացնելու վերաբերյալ**

ՀՀ ֆինանսների նախարարությունը www.gnumner.minfin.am կայքում հրապարակում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկը:

Ցանկը չի ներառում տեղեկատվություն, թե ում որոշմամբ է տվյալ մասնակիցը ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում: Առաջարկում ենք.

1) Ցանկում ավելացնել սյուն նշելով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում տվյալ մասնակցին ներառելու որոշում կայացրած պատվիրատուի անունը:

2) Գնումների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության տարեկան հաշվետվության մեջ ներառել տեղեկատվություն տարվա ընթացքում ամենից շատ գնման պայմանագիր լուծած և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում մասնակցին ներառելու վերաբերյալ որոշումներ կայացրած պատվիրատուների անունները, նշելով լուծված պայմանագրերի քանակը և ընդհանուր գումարը:

3) Գնումների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության տարեկան հաշվետվության մեջ ներառել տեղեկատվություն այն մասնակիցների վերաբերյալ, որոնց անունը տարվա ընթացքում երկու և ավելի անգամ ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում:

**Առաջարկություն №3**

**Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ պատճառաբանված որոշման մեջ պատվիրատուի ղեկավարը պետք է նշի, թե ինչպես է մատակարարի հետ պայմանագրի լուծումը ազդել հանրությանը ծառայություն մատուցելու պատվիրատուի կարողության վրա**

Առաջարկում ենք ավելացնել պահանջ, որպեսզի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատճառաբանված որոշման մեջ պատվիրատուի ղեկավարը նշի, թե ինչպես է մատակարարի հետ պայմանագրի լուծումը ազդել հանրությանը ծառայություն մատուցելու պատվիրատուի կարողության վրա:

Եթե պայմանագրի լուծումը չի ազդել հանրությանը ծառայություն մատուցելու պատվիրատուի կարողության վրա, ապա հարց է առաջանում, թե ինչու է հարկավոր այդ գնումը:

Եթե պայմանգրի լուծումը ազդել է հանրությանը ծառայություն մատուցելու պատվիրատուի կարողության վրա, ապա պատվիրատուն պետք է նշի, թե ինչպե՞ս, ի՞նչ գործիքների և մեխանիզմների օգնությամբ է կառավարում հանրությանը ծառայություն մատուցելու իր կարողությունների հետ կապված ռիսկերը:

**Առաջարկություն №4**

**Գնումների պլանում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում պատվիրատուների կողմից**

Առաջարկում ենք ընդունել կարգավորում, որի համաձայն, պետական բյուջեի հաշվետվությանը կից, պատվիրատուները կհրապարակեն տեղեկատվություն բյուջետային հատկացումների հաշվին կատարվող գնումների պլանում իրենց կողմից կատարված փոփոխությունների թվաքանակի և ծավալի վերաբերյալ, նշելով.

ՀՀ կառավարության կողմից հաստատված գնումների պլանում տողերի թիվը:

ՀՀ կառավարության կողմից հաստատված գնումների ծավալը (հազար դրամ):

Գնումների պլանում կատարված փոփոխությունների թիվը, կցելով յուրաքանչյուր փոփոխությունը կատարող որոշման կամ հրամանի տեսապատճենը:

Գնումների պլանում կատարված փոփոխությունների արդյունքում գնումների պլանում ձևավորված տողերի թիվը, այդ թվում 0-ացած տողերի թիվը:

Գնումների պլանում կատարված փոփոխությունների հիմնավորումները:

Այլ տեղեկատվություն:

**Առաջարկություն №5**

**Գնումների տարեկան հաշվետվության մեջ պայմանագրերի լուծման և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ**

Առաջարկում ենք գնումների տարեկան հաշվետվության մեջ ներառել տեղեկատվություն լուծված պայմանագրերի և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Մասնավորապես առաջարկում ենք ներկայացնել լուծված պայմանագրերի քանակը և ընդհանուր գումարը, ինչպես նաև ամենամեծ թվով և ամենամեծ ընդհանուր գումարով պայմանագրեր լուծած 10 պատվիրատուների անունները, առանձին նշելով գանձված տուգանքների և տույժերի մեծությունները, ֆինանսական և ոչ ֆինանսական այլ պատիժները:

Առաջարկում ենք նաև նշել գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված կազմակերպությունների թվաքանակը, անվանապես նշելով այն կազմակեպություններին, որոնք զրկվել են 2 և ավելի անգամ:

**Առաջարկություն №6**

**Գնում չհանդիսացող ծախսերի վերաբերյալ**

Մի շարք պատվիրատուներ գնում են կատարում գնում չհանդիսացող ծախս «ընթացակարգ»-ով (այսուհետ՝ ԳՉԾ):

2018թ. հունիսի 15-ի «Բյուջեների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №706-Ն իր որոշմամբ ՀՀ կառավարությունը սահմանել է, որ ԳՉԾ են համարվում՝

(1) նախորդ տարիների բյուջեների կատարման ընթացքում ստանձնած պարտավորությունների դիմաց առաջացած պարտքերի մարմանն ուղղվող ծախսերը,

(2) միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման գծով ծախսերը,

(3) հսկիչ գնումներով կատարվող ծախսերը,

(4) աշխատանքային պայմանագրերը, օրենքով նախատեսված դեպքերում քրեական, վարչական կամ դատական վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց որոշումներով նախատեսված կոնկրետ անձանց կողմից մատուցվող ծառայությունների գծով ծախսերը, արժեթղթերի հավատարմագրային կառավարման հետ կապված ծախսերը,

(5) կանխիկ և բանկային վճարային քարտերով շրջանառվող միջոցների գծով՝ ՀՀ կառավարության որոշումներով հաստատված ծախսերը և

(6) ՀՀ տարածքից դուրս կատարվող գնումների գծով կատարվող ծախսերը:

Առաջարկում ենք դադարեցնել ԳՀԾ «ընթացակարգի» կիրառումը: Մինչև ԳՀԾ «ընթացակարգի» դադարեցումը, առաջարկում ենք ներկայացնել պահանջ, որպես այդ «ընթացակարգով» գնումներ կատարած պատվիրատուները ներկայացնեն հաշվետվություն, թե ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 15-ի №706-Ն որոշմամբ սահմանված 5 դեպքերից որ մեկին է համապատասխանում ԳՀԾ «ընթացակարգով» կատարված գնումը:

**Առաջարկություն №7**

**Պայմանագրի կատարման նկատման հանրային հսկողության մասին**

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն «Եթե կնքված պայմանագրի գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա կնքված պայմանագրի մասին հայտարարությունում նշվում է նաև, որ դրանով սահմանված ժամկետում պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում՝ ինչպես գնման տվյալ գործընթացին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցները, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունները և լրատվական գործունեություն իրականացնող անձինք, . . . »:

Առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող գնումների տարեկան հաշվետվության մեջ ներառել տեղեկատվություն ըստ պատվիրատուների կատարված գնումների քանակի և դրանց ՀԿ-ների և լրատվական գործունեություն իրականացնող անձանց մասնակցության թվաքանակների վերաբերյալ, առանձին հավելվածի տեսքով ներառելով նաև ՀԿ-ների և լրատվական գործունեություն իրականացնող անձանց տվյալները:

## Հավելված 2. Գնումների համակարգի հետ կապված հարցեր

**Հարց №1**

**ՀՀ օրենսդրությանը համապատասխանության վերաբերյալ գնահատական տալու մասին**

ՀՀ վարչապետի 2018թ. հունիսի 11-ի №743-Լ որոշմամբ հաստատված ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրության 11-րդ կետի (7)-րդ մասի «բ» ենթակետի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը գնահատում է հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսաբյուջետային գործունեության՝ ներառյալ գնումների գործընթացների (գործարքների)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխանությունը:

Խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն 2018թ. հուլիսի 1-ից ի վեր վերը նշված կանոնադրական պարտականության շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականների վերաբերյալ, ներկայացնելով նաև գնահատականի փաստաթղթի պատճենը:

**Հարց №2**

**Պատճառաբանված որոշումների վերաբերյալ**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն 2018թ. սկսած բոլոր այն դեպքերի վերաբերյալ, երբ ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին չի ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, պատվիրատուի ղեկավարի որոշումը համարելով չպատճառաբանված:

Խնդրում ենք նաև տրամադրել պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը ստանալուց հետո ՀՀ ֆինանսների նախարարությունում կազմակերպվող գործընթացի նկարագրությունը (արձակում է արդյոք ՀՀ ֆինանսների նախարարը հրաման, թե ֆինանսների նախարարությունում այլ իրավական ձևակերպում չի ստանում, ստուգում է արդոք ՀՀ ֆինանսների նախարարությունը պատճառաբանված լինելու հանգամանքը, այլ գործընթացներ):

## Հավելված 3. Պաշտոնական պարզաբանում պահանջող հարցեր

**Պաշտոնական պարզաբանում №1**

**Գնումների պլանով նախատեսված գումարը գերազանցող մեծությամբ պայմանագրի դեպքում որքան կարող է կազմել պայմանագրի գումարի առավելագույն մեծությունը**

Armpes-ի համաձայն 2022թ. հունիսի 7-ին ՆԳՆ-ն 1,275,000,000.0 դրամ գումարով շինարարական աշխատանքներ ձեռք բերելու վերաբերյալ պայմանագիր է կնքել «Բիդեք» ՍՊԸ-ի հետ: Համաձայնագրերից հետևում է, որ «Բիդեք» ՍՊԸ-ի հետ պայմանագիրը կնքվել է ոչ թե 2022թ. հունիսի 7-ին, այլ 2021թ. սեպտեմբերի 3-ին: ՆԳՆ-ի (Ոստիկանության) և «Բիդեք» ՍՊԸ-ի միջև պայմանագրի կնքման և դրանում փոփոխությունների կատարման ժամանակագրությունը աղյուսակի տեսքով ներկայացված է ստորև:

**Աղյուսակ. «Բիդեք» ՍՊԸ-ի հետ կնքված «ՀՀ Ո ԲՄԱՇՁԲ-2021-ՇԻՆ/ՕԿԿ-47» պայմանագրին կից համաձայնագրերը**

| | **Համաձայնա-գրի օրը** | **Հիմնական բովանդակություն** |
|---|---|---|
| 1 | 29 նոյեմբերի 2021թ. | Պայմանագրով սահմանված 2,192,419,599.74 դրամը կսահմանվի 250,191,100.0 դրամ, մնացած 1,942,288,499.74 դրամը կիրականացվի |

| | | |
|---|---|---|
| | | ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո լրացուցիչ համաձայնագրի միջոցով |
| 2 | 17 դեկտեմբերի 2021թ. | Աշխատանքների կատարման ժամկետի ավարտը 930 օրացույցային օրվա փոխարեն 150 օրացուցային օր |
| 3 | 27 հունվարի 2022թ. | Հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ (53 էջ աղյուսակ) |
| 4 | 7 հունիսի 2022թ. | Պայմանագրի 2,192,419,599.74 դրամը սահմանել 1,275,000,000.0 դրամ, մնացած 667,288,499.74 դրամը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո լրացուցիչ համաձայնագրի կնքման միջոցով |
| 5 | 2022թ. նոյեմբերի 1 | №4 համաձայնագրով սահմանված 1,275,000,000.0 դրամը նվազեցնել 875,000,000.0 դրամ, «որի վճարումը պատվիրատուի կիրականավի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան»: |

2022թ. հունիսի 7-ին կնվել է ոչ թե «ՀՀ Ո ԲՄԱՇՁԲ-2021-ՇԻՆ/ՕԿԿ-47» գնման պայմանագիրը, այլ դրա համաձայնագիր №4-ը, որի համաձայն պայմանագրի 2,192,419,599.74 դրամը նվազեցվել է մինչև 1,275,000,000.0 դրամ: Պայմանագրի գումարը եղել է շատ ավելի մեծ: ՀՀ ՆԳՆ (Ոստիկանության) և «Բիդեք» ՍՊԸ-ի միջև 2021թ. սեպտեմբերի 3-ին «ՀՀ Ո ԲՄԱՇՁԲ-2021-ՇԻՆ/ՕԿԿ-47» գնման պայմանագրի շրջանակներում կնքված №4 համաձայնագրի պատճենը պատկերի տեսքով ներկայացված է ստորև:

**Պատկեր. ՀՀ ՆԳՆ և «Բիդեք» ՍՊԸ-ի միջև 2021թ. սեպտեմբերի 3-ին «ՀՀ Ո ԲՄԱՇՁԲ-2021-ՇԻՆ/ՕԿԿ-47» գնման պայմանագրի շրջանակներում կնքված №4 համաձայնագրի պատճենը**



ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N4

N ՀՀ Ո ԲՄՇՁԲ-2021-ՇԻՆ/ՕԿԿ-47 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «07» 06 2022թ.

ՀՀ ոստիկանություն, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գեղապետ Գ.Մովսիսյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բիդեք» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Ավետիսյանի (այսուհետ՝ Կատարող), հիմք ընդունելով 03.09.2021թ.-ին կնքված ՀՀ Ո ԲՄՇՁԲ-2021-ՇԻՆ/ՕԿԿ-47 գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.5 և 8.13 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 28 ապրիլի 2022 թվականի թիվ 598-Ն որոշումը՝ սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին ՀՀ Ո ԲՄՇՁԲ-2021-ՇԻՆ/ՕԿԿ-47 ծածկագրով գնման պայմանագրի 5.1 կետով սահմանված 2 192 419 599,74 (երկու միլիարդ մեկ հարյուր իննսուներկու միլիոն չորս հարյուր տասնինց հազար հինգ հարյուր իննսունինց և թթասասունչորս լումա) ՀՀ դրամից սահմանել 1 275 000 000 (մեկ միլիարդ երկու հարյուր թթասնասունհինգ միլիոն) ՀՀ դրամը, որը պատվիրատուի կողմից կիրականացվի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան և աշխատանքների կատարման օրագրյայուն գրաֆիկը Հավելված 2-ին համապատասխան, իսկ մնացած 667 288 499.74 /վեց հարյուր վաթսունյոթ միլիոն երկու հարյուր ութսունութ հազար չորս հարյուր իննսունինց և թթասասունչորս լումա/ ՀՀ դրամ գումարը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո լրացուցիչ համաձայնագրի կնքման միջոցով: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն համաձայնագրով կողմերը համաձայնության եկան և հաստատեցին ՀՀ Ո ԲՄՇՁԲ-2021-ՇԻՆ/ՕԿԿ-47 ծածկագրով պայմանագրի 900011021947 հաշվեհամարը փոխարինել 900011037000 հաշվեհամարով:

1.3 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

1.4 Համաձայնագրի պայմանները կիրառվում են նաև կից աշխատանքային գրաֆիկին համապատասխան մինչև սույն համաձայնագրի կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքի կատարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (3) երեք էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքները ու պարտականությունները իրականացնում է ՀՀ ոստիկանությունը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ոստիկանություն
ք.Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
Աշխատակազմի գործառնական վարչություն
2/Հ 900011037000
ՀՎՀՀ 01533334
Հեռ. 010 596857, 010 596039
Էլ. Փոստ:policetv.gnumner@mail.ru

Գ. Մովսիսյան
/ՀՀ ոստիկանության գեղապետի տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Բիդեք» ՍՊԸ
գործ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան Սասունցի Դավիթ 87ա
իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նելսոնի 86
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
2/Հ՝ 15700 15 55 99 20 100
ՀՎՀՀ՝ 00450801
հեռ. 011 57 55 22
Էլ. Հասցե՝ bedeck.llc@mail.ru, info@bedeck.am

Գ. Ավետիսյան
/«Բիդեք» ՍՊԸ տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
«07» 06 2022թ.
ՀՀ Ո ԲՄՇՁԲ-2021-ՇԻՆ/ՕԿԿ-47 ծածկագրով գնման պայմանագրի

ՕՐԱԳՐԻՖԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՀՀ ոստիկանության ք. Երևան, Էրեբունի համայնք, Խորենացի 158 հասցեում տեղակայված շենք-շինությունների հիմնանորոգման-վերակառուցման (կառուցման)
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը* | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | ՀՀ ոստիկանության ք. Երևան, Էրեբունի համայնք, Խորենացի 158 հասցեում տեղակայված շենք-շինությունների հիմնանորոգման-վերակառուցման (կառուցման) աշխատանքներ | 01.02.2022թ. | 20.12.2022թ. |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | |

* Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությանն առնչվող բոլոր փոփոխությունները անհրաժեշտ է նախօրոք համաձայնեցնել Պատվիրատուի հետ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ոստիկանություն
ք.Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
Աշխատակազմի գործառնական վարչություն
2/Հ 900011037000
ՀՎՀՀ 01533334
Հեռ. 010 596857, 010 596039
Էլ. Փոստ:policetv.gnumner@mail.ru

Գ. Մովսիսյան
/ՀՀ ոստիկանության գեղապետի տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Բիդեք» ՍՊԸ
գործ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան Սասունցի Դավիթ 87ա
իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նելսոնի 86
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
2/Հ՝ 15700 15 55 99 20 100
ՀՎՀՀ՝ 00450801
հեռ. 011 57 55 22
Էլ. Հասցե՝ bedeck.llc@mail.ru, info@bedeck.am

Գ. Ավետիսյան
/«Բիդեք» ՍՊԸ տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 1
«07» 06 2022թ.
ՀՀ Ո ԲՄՇՁԲ-2021-ՇԻՆ/ՕԿԿ-47 ծածկագրով գնման պայմանագրի

Վճարման ժամանակացույց

| N | աշխատանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2022թ. բյուջեից | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| 1 | Ընդհանուր շինարարական աշխատանքներ 45221142/3 | | | | | | 637 500 000 | 956 250 000 | 956 250 000 | 956 250 000 | 1 275 000 000 | 1 275 000 000 | 1 275 000 000 | 1 275 000 000 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ոստիկանություն
ք.Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
Աշխատակազմի գործառնական վարչություն
2/Հ 900011037000
ՀՎՀՀ 01533334
Հեռ. 010 596857, 010 596039
Էլ. Փոստ:policetv.gnumner@mail.ru

Գ. Մովսիսյան
/ՀՀ ոստիկանության գեղապետի տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Բիդեք» ՍՊԸ
գործ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան Սասունցի Դավիթ 87ա
իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նելսոնի 86
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
2/Հ՝ 15700 15 55 99 20 100
ՀՎՀՀ՝ 00450801
հեռ. 011 57 55 22
Էլ. Հասցե՝ bedeck.llc@mail.ru, info@bedeck.am

Գ. Ավետիսյան
/«Բիդեք» ՍՊԸ տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ

Առկա ֆինանսական միջոցներով պայմանագրի գումարը կազմել է 875,000,000 դրամ: ՀՀ կառավարության կողմից հաստատված գնումների պլանում նախատեսված է եղել 875,000,000 դրամ (ԳՄԱ կոդ 45221142/3): Առկա ֆինանսական միջոցներով չապահովված պայմանագրի մասը կազմել է 400,000,000.0 դրամ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքը և 2017թ. №526-Ն որոշումը պայմաններ են ստեղծում, որպեսզի ոչ մի պայմանագիր առանց բավարար ֆինանսավորման ուժի մեջ չմտնի: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը կարգավորում է մինչև ֆինանսական միջոցներ նախատեսելը պայմանագրերի կնքումը: Սակայն օրենքը չի նախատեսում, որ կարելի է արդեն իսկ պլանով

նախատեսված գումարից մեծ գումարով պայմանագիր կնքել, քանի որ գնումների պլանում կոնկրետ գումարի նախատեսումը նշանակում է, որ պատվիրատուն արդեն իսկ կանխատեսել է գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը և ֆինանսական միջոցներն արդեն իսկ տարվա սկզբին նախատեսված են գնումների պլանով, ինչն իր հերթին նշանակում է, որ գնման մրցակցային ձևի կիրառումը ժամկետի առումով հնարավոր է:

**Խնդրում ենք տրամադրել պաշտոնական պարզաբանում հետևյալ երկու հարցերի վերաբերյալ**.

1. Եթե տվյալ գնման համար ֆինանսավորում նախատեսվել է (այսինքն, սա այն դեպքը չէ, երբ պատվիրատուն չի կարողանում կանխատեսել), ՀՀ օրենսդրության որ կարգավորման համաձայն է պատվիրատուն գնումների պլանում նախատեսված մեծությունը գերազանցող գումարով պայմանագիր կնքում:

2. Ի՞նչ չափով կարող է կնքված պայմանագրի ընդհանուր գումարը գերազանցել պլանով նախատեսված մեծությունը (գերազանցել 25%-ով, 50%-ով, լինել կրկնապատիկը, եռապատիկը կամ որևէ այլ մեծություն):

## Պաշտոնական պարզաբանում №2

**Պաշտոնական պարզաբանման խնդրանք**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 23-ի 1-ին մասի 1-ին կետի համաձայն գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ կարգ) 23 կետի 4-րդ ենթակետի համաձայն հաստատված ցանկի գնումները կարող են կատարվել օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա՝ հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայության հիմքով: Ցանկի 33-րդ տողը կարգ է ներմուծվել ՀՀ կառավարության 2019թ. հոկտեմբերի 10-ի №1422-Ն որոշմամբ: 2019թ. հոկտեմբերի 10-ի նիստի ժամանակ հարցը ներկայացնելիս, վերը նշված տողի հետ կապված ՀՀ ֆինանսների նախարար Ա. Ջանջուղազյանն առանձնացրել էր, որ «մշակութային և գեղարվեստաստեղծագործական միջոցառումների մասը, որովհետև դա էլ մշտապես քննարկվում ա, որ էս դեպքում, որպես կանոն մրցութային գործընթաց կամ մրցակցային գործընթաց կիրառելը գործնականում հնարավոր չի, որովհետև կոնկրետ տվյալ արդյունքն է ուզում ստացվել, այսինքն տվյալ հեղինակի արդյունքն է ուզում ստացվել: Դա այստեղ առաջարկվող փոփոխություններով ենթադրվում ա, որ առանց լրացուցիչ գործընթացի կարող է մեկ անձից գնման եղանակով կատարվել, բայց էստեղ մի բացառություն

այնուհանդերձ կա: Դա շինարարական աշխատանքներին վերաբերող մասն է» (նիստի տեսագրությունy հասանելի է https://www.youtube.com/watch?v=kBRq5FOcCPY&t=1671s էջում):

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2023թ. ապրիլի 26-ի թիվ 69-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունում 2022 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ» ընթացիկ եզրակացության համաձայն ՀՀ ոստիկանությունը չէր կարող «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն պայմանագիր կնքել «Արման Արզումանյան» ԱՁ-ի հետ, քանի որ այդ դեպքում գնումը պետք է պայմանավորված լիներ մատակարարի հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ: ՀՀ հաշվեքննիչ պալատը նաև ընդգծել է, որ հատուկ կամ բացառիկ իրավունքը որոշակիացված են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի 15-րդ ենթակետով, որի համաձայն հատուկ կամ բացառիկ իրավունքը բխում է իրավական կամ վարչական ակտով իրավասու մարմնի տրամադրած իրավասություններից, որի նպատակն է որոշակի գործունեության իրականացման իրավունքը (ներառյալ՝ հանրային ծառայությունների ոլորտում) վերապահել մեկ կամ սահմանափակ թվով կազմակերպությունների, և որով էապես սահմանափակվում է նման գործունեություն իրականացնելու այլ կազմակերպությունների հնարավորությունը:

2023թ. նոյեմբերի 11-ին Երևանի քաղաքապետարանը 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշման հավելվածի 23-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ցանկի 33-րդ տողի (մշակութային և (կամ) գեղարվեստաստեղծագործական միջոցառումների (բեմադրությունների, ցուցադրությունների, ցուցահանդեսների, համերգների, փառատոնների, կինոարտադրության, հեռուստահաղորդումների, ռադիոհաղրումենրի արտադրության) կազմակերպման շրջանակներում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում, բացառությամբ շինարարական աշխատանքների) հիման վրա գնման գործընթաց է կազմակերպել և մեկ անձից ընթացակարգի արդյունքում պայմանագիր է կնքել «Սինեմարտ» ՍՊԸ-ի հետ: Armeps համակարգում և www.gnumner.minfin.am կայքում չի հաջողվել գտնել տեղեկատվություն, որը կվկայեր, որ «Սինեմարտ» ՍՊԸ-ն օժտված է Երևանի քաղաքապետարանի կողմից ձեռք բերվող ծառայությունների հեղինակային և հարակից, հատուկ կամ բացառիկ իրավունք:

**Խնդրում ենք տրամադրել պաշտոնական պարզաբանում**, թե արդյոք գնումը կարող է կատարվել ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված կարգի 23 կետի 4-րդ ենթակետի համաձայն հաստատված ցանկի 33-րդ տողով, եթե մատակարարը չունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 2-ի 1-ին մասի 15-րդ ենթակետով սահմանված հատուկ կամ բացառիկ իրավունք, կամ հոդված 23-ի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հեղինակային և հարակից իրավունքներ:

## Պաշտոնական պարզաբանում №3

### Պաշտոնական պարզաբանման խնդրանք

«Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 22-ի համաձայն «Գնումը կարող է կատարվել գնանշման հարցման ձևով, եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի ութսունապատիկը, և գնման առարկան ներառված չէ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով նախատեսված ցուցակում:» Մեր դիտարկումների համաձայն 2021-22թթ. մի շարք դեպքերում պատվիրատուները գնանշման հարցում եղականով կատարել են 80 մլն դրամը գերազանցող գնում, որոնք չեն համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 22-ի պահանջներին: Նման 42 գործարքների վերաբերյալ տվյալները ներկայացված են ստորև աղյուսակ 1-ում և 2-ում:

**Աղյուսակ 1. Գնանշման հարցում ընթացակարգով 2022թ. կատարված առավել խոշոր 20 գնումները**

| | Պատվիրատու | Ընտրված մասնակից | Պայմանագրի | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կնքման ամսաթիվ | Ընդհանուր գումարը (դրամ) | Գումարը առկա ֆինանսական միջոցներով (դրամ) | Հաշվար-կային տնտեսում (դրամ) |
| 1 | Առողջ. կենտրոն | «ԴԱՅՍ» ՍՊԸ | 21/11/2022 | 179,850,000 | 1,798,500 | - |
| 2 | ՀՀ ՊՆ | Արպանիվ ՍՊԸ | 29/03/2022 | 157,713,098 | 157,713,098 | 2,574,902 |
| 3 | Առողջ. կենտրոն | Ֆոտոն ՍՊԸ | 21/02/2022 | 140,400,000 | 1,404,000 | - |
| 4 | Մեծամոր | ԿԱՐՍԻՐ ՍՊԸ | 22/09/2022 | 13,4155,582 | 13,4155,582 | 27,181,119 |
| 5 | Գյումրու ԲԿ | ՊՐՈՖՏԵՍՏ ՍՊԸ | 07/04/2022 | 129,250,000 | 129,250,000 | - |
| 6 | Առողջ. կենտրոն | Արֆարմացիա ՓԲԸ | 28/11/2022 | 116,815,000 | 1,168,150 | - |
| 7 | ՀՀ ՊՆ | Էյչ Գրուպ ՍՊԸ | 14/06/2022 | 111,945,960 | 111,945,960 | 4,894,040 |
| 8 | Շիրակ | ԿԻՐ - ՔԱՐ ՍՊԸ | 06/12/2022 | 106,878,960 | 106,878,960 | - |
| 9 | Վանաձորի ԲԿ | ՆԱՆՈ ՄԵԴ ՍՊԸ | 20/01/2022 | 100,295,000 | 100,295,003 | - |
| 10 | Վանաձորի ԲԿ | ՊՐՈՖՏԵՍՏ ՍՊԸ | 19/01/2022 | 99,600,000 | 99,600,000 | - |
| 11 | Մեծամոր | «ԳԱԶՇԻՆ ՄՁ» ՍՊԸ | 29/09/2022 | 97,499,275 | 97,499,275 | 17,264,895 |
| 12 | Կապան | Արշ-Արա | 21/11/2022 | 95,268,470 | 95,268,470 | 2,131,929 |
| 13 | Ջարենցավան | Շինպլյուս ՍՊԸ | 17/06/2022 | 91,980,000 | 91,980,000 | 21,542,000 |
| 14 | Գյումրու ԲԿ | Էմ Դի ընդ Դի Ըլայենս ՍՊԸ | 07/04/2022 | 88,950,000 | 84,150,000 | - |
| 15 | ՀՀ ԱԻՆ | ԳԱՄՇԻՆ ՍՊԸ | 09/12/2022 | 88,353,000 | 51,420,000 | - |
| 16 | Կապան | Կապանի Նորոգշին ՍՊԸ | 04/10/2022 | 88,080,000 | 73,400,000 | 15,331,780 |
| 17 | Սպիտակ | Նեմրութ ՍՊԸ | 20/08/2022 | 87,573,788 | 87,573,788 | 5,124,212 |
| 18 | Գեղարքունիք | Օլանդա ՍՊԸ | 03/11/2022 | 85,320,000 | 85,319,458 | - |
| 19 | ՀՀ ՊՆ | Մոսէսքո ՍՊԸ | 11/04/2022 | 80,520,000 | 80,520,000 | 480,000 |
| 20 | ՀՀ ՆԳՆ | Լեգիոն 9 ՍՊԸ | 28/12/2022 | 80,000,000 | 80,000,000 | - |

*Աղբյուր. Armeps*

*Ծանոթություն. ՀՀ ՊՆ՝ ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ ԱԻՆ՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ ՆԳՆ՝ ՀՀ ներքին գործերի նախարարություն, Առողջ. կենտրոն՝ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ, Մեծամոր՝ Մեծամորի համայնքապետարան, Գյումրու ԲԿ՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ, Շիրակ՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ, Վանաձորի ԲԿ՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ, Կապան՝ Կապանի համայնքապետարան, Ջարենցավան՝ Ջարենցավանի համայնքապետարան, ՀՀ ԱԻՆ՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, Սպիտակ՝ Սպիտակի համայնքապետարան, Գեղարքունիք՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ, ՀՀ ՆԳՆ՝ ՀՀ ներքին գործերի նախարարություն*

**Աղյուսակ 2. Գնանշման հարցում ընթացակարգով 2021թ. կատարված առավել խոշոր 22 գնումները**

| | Պատվիրատու | Ընտրված մասնակից | Պայմանագրի |
|---|---|---|---|

| | | | կնքման ամսաթիվ | Ընդհանուր գումարը (դրամ) | Գումարը առկա ֆինանսական միջոցներով (դրամ) | Հաշվար-կային տնտեսում (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | ՀՀ ՊՆ | Արպանիվ ՍՊԸ | 29/03/2021 | 442,864,506 | 424,165,006 | 40,500,494 |
| 2 | ՀՀ ԱՌՆ | Ֆարմատեք ՓԲԸ | 25/06/2021 | 245,511,120 | 28,728,000 | - |
| 3 | ՀՀ ԱՌՆ | Մ.Լ.Ն Ֆարմ ՍՊԸ | 25/06/2021 | 178,372,000 | 48,372,000 | - |
| 4 | Մետրո | ՕՕՕ «ЭЛАР ГОЛД» | 06/07/2021 | 160,950,000 | 270,000 | - |
| 5 | ՀՀ ՊԵԿ | ԴՐՈՒՋՅԱ ՍՊԸ | 19/02/2021 | 154,000,000 | 154,000,000 | 47,529,289 |
| 6 | Լուսավորիչ ԲԿ | Դիասերվ ՍՊԸ | 23/04/2021 | 139,000,000 | 139,000,000 | - |
| 7 | Ակադեմ | «Մ.Ս. Հոլդինգ» ՍՊԸ | 17/09/2021 | 110,140,000 | 11,014,000 | - |
| 8 | ՀՀ ՊՆ | Մետաքսկոմբինատ ՍՊԸ | 16/04/2021 | 109,336,080 | 109,336,080 | 26,766,880 |
| 9 | Մետրո | «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 18/08/2021 | 103,800,000 | 103,800,000 | 6,600,000 |
| 10 | ՀՀ ՊՆ | Ավանգարդ ՍՊԸ | 16/04/2021 | 102,016,042 | 102,016,042 | 11,974,458 |
| 11 | ՀՀ ՊՆ | տեխսթոր ՍՊԸ | 27/08/2021 | 101,180,000 | 101,180,000 | 340,000 |
| 12 | ՀՀ ՊՆ | Սլացք ՓԲԸ | 07/04/2021 | 99,396,000 | 99,396,000 | 9,464,000 |
| 13 | ՀՀ ՊՆ | Գարուն ֆաբրիկա | 14/05/2021 | 99,348,000 | 99,348,000 | 338,000 |
| 14 | ՀՀ ՊՆ | Գարուն ֆաբրիկա | 16/04/2021 | 98,643,840 | 98,643,840 | 29,541,072 |
| 15 | Աղբահանություն | Արպանիվ ՍՊԸ | 10/05/2021 | 97,600,000 | 97,600,000 | |
| 16 | Երևան | Հարսնաձոր ՍՊԸ | 27/09/2021 | 88,092,000 | 88,092,000 | 721,920 |
| 17 | Ջրային կոմիտե | Աս Շին Տրանս ՍՊԸ | 15/04/2021 | 87,400,000 | 87,400,000 | |
| 18 | Վանաձորի ԲԿ | Թեոֆարմա ՍՊԸ | 10/12/2021 | 85,740,640 | 82,802,300 | |
| 19 | ՀՀ ՊՆ | Գենկոն ՍՊԸ | 03/06/2021 | 84,660,000 | 84,660,000 | |
| 20 | Քաղշինկոմիտե | Շինսերտիֆիկատ ՍՊԸ | 07/06/2021 | 84,000,000 | 22,176,800 | |
| 21 | Քաղշինկոմիտե | Շինսերտիֆիկատ ՍՊԸ | 07/06/2021 | 84,000,000 | 11,091,365 | 2,563,100 |
| 22 | ՀՀ ՊՆ | UNIQUE LINE LLC | 08/11/2021 | 81,810,000 | 81,810,000 | 19,0000 |

*Աղբյուր. Armeps*

*Ծանոթություն. ՀՀ ՊՆ՝ ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ ԱՌՆ՝ ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ ՊԵԿ՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե, Մետրո՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ, Լուսավորիչ ԲԿ՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն» ՓԲԸ, Ակադեմ՝ «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամ, Աղբահանություն՝ «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ, Երևան՝ Երևանի քաղաքապետարան, Ջրային կոմիտե՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե, Վանաձորի ԲՀ՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ, Քաղշինկոմիտե՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե, Գարուն ֆաբրիկա՝ Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ*

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 42-ի և ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 9-ի №1159-Ն որոշման հավելվածով հաստատված ցանկի 3-րդ կետի (1) ենթակետի համաձայն **խնդրում ենք պարզաբանել այն դեպքերը**, երբ պատվիրատուները կարող են գնանշման հարցման կիրառման դեպքում կատարել գնումների բազային միավորի 80-ապատիկը գերազանցող գնում, եթե գնման առարկան ներառված չէ էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակում և գնումը պետական գաղտնիկ չի պարունակում:

## Հավելված 4. Ենթադրամաշնորհային մրցույթի հետ կապված աշխատանքներ

«Իրազեկ քաղաքացիների միավորումը» խորհրդատվական ՀԿ-ն հունվարի 24-ին հայտարարել է փակ մրցույթ լրատվամիջոցների և մարզային ՀԿ-ների համար: Փակ մրցույթի վերաբերյալ հայտարարությունը հասանելի է https://uic.am/18161 հղումով:

Ենթադրամաշնորհների մրցույթին մասնակցել է 7 կազմակերպություն:

1) «Համայնքի ապավեն» ՀԿ

2) «Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ

3) «ՀԿ կենտրոն» ՀԿ

4) «Ինֆորմացիոն կոմիտե» տեղեկատվական ՀԿ

5) Սիվիլիթաս հիմնադրամ

6) «Դեղերի օգտագործման գիտական խումբ» ՀԿ

7) «Ֆակտոր տեղեկատվական կենտրոն» ՀԿ

«Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական ՀԿ-ն հայտ ներկայացրած «Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ-ին առաջարկել է իր կողմից ներկայացված հայտում ներառել ջատագովության կոմպոնենտ և հստակեցնել ծրագրի ընթացքում դիտարկվող մրցույթների քանակը: «Ինֆորմացիոն կոմիտե» տեղեկատվական ՀԿ-ին առաջարկվել է հայտի գործողությունների բաժնում ներառել հանձնման-ընդունման գործընթացին մասնակցելու վերաբերյալ կետ:

Թե «Ինֆորմացիոն կոմիտե» տեղեկատվական ՀԿ-ն, թե «Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ-ն կատարել են առաջարկված փոփոխությունները:

Մրցութային հանձնաժողովի շնորհած գնահատականների համաձայն դրամաշնորհային մրցույթի հաղթող են ճանաչվել հետևյալ կազմակերպությունները[17].

«Ինֆորմացիոն կոմիտե» տեղեկատվական ՀԿ

«Դեղերի օգտագործման գիտական խումբ» ՀԿ

«Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ

2024թ. մարտի 21-ի միջոցառումների կազմակերպման «Բյուրո» ընկերության տարածքում կազմակերպվել է ենթադրամաշնորհային մրցույթի հաղթողների ներկայացման արարողությունը: «Պետական գնումների հանրային վերահսկողության և հաշվետվողականության խթանում» ծրագրի շրջանակներում ենթադրամաշնորների մեկնարկի արարողության վերաբերյալ հայտարարությունը հասանելի է https://uic.am/events/պետական-գնումների-հանրային-վերահսկ հղումով:

**«Ֆակտոր տեղեկատվական կենտրոն» ՀԿ**

**Կոռուպցիոն ռիսկերը Հայաստանի ոռոգման համակարգերի զարգացման ծրագրում**

ՀՀ հաշվեքննիչ պալատը 2023 թ-ի ուսումնասիրության արդյունքում մեծածավալ խեղաթյուրումներ է արձանագրել ԵԶԲ աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային

[17] Մրցութային հանձնաժողովի 2024թ. փետրվարի 28-ի Մ-01/24 արձանագրություն:

տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգման աշխատանքներում, սակայն կապալառուների անունները չեն հրապարակվել:

**Սիվիլիթաս հիմնադրամ**

**Նպաստելով պետական միջոցների արդյունավետ վերահսկողությանը**

Ծրագրի շրջանակում նախատեսում ենք ընտրել 10 տենդեր, որոնք կվերաբերեն ճանապարհաշինությանը, դպրոցների, նախակրթարանների, պոլիկլինիկաների կամ հանրային այլ հաստատությունների շինարարությանը և որպես մեդիա գրանցվել դրանց հանձնման-ընդունման գործընթացում ներգրավվելու համար: Այդպիսով, ՍիվիլՆեթը՝ որպես լրատվամիջոց, նույնպես հնարավորություն կունենա դիտարկելու կատարված աշխատանքների համապատասխանությունը պայմանագրերի պահանջներին:

**«ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ**

**Բարելավելով պայմանագրերի կատարման հսկողության գործընթացները**

ՀԿ Կենտրոնը նախատեսում է կազմակերպել ՀՀ երկու խոշոր համայնքների գնումների գործընթացի և պայմանագրերի հսկողության հետ կապված ուսումնասիրություն, որի արդյունքում կարող ենք եզրակացնել, թե որոնք են հիմնական պատճառները առաջացող խնդիրների:

**«Համայնքի ապավեն» կանանց և եիրտասարդների աջակցման կենտրոն ՀԿ**

**Վեդի խոշորացված համայնքի խմելու ջրի ջրագծերի հիմնանորոգման աշխատանքների գնահատում**

Ծրագրի հաստատումից հետո, մեր առաջին քայլն է տեղեկատվություն ստանալ տվյալ ծրագրի պատվիրատուի և հաղթած մասնակցի մասին, տեղեկատվություն ունենալ իրականացման ժամկետների մասին, արդյոք մասնակիցը պայմանագրում նշված ժամկետում է իրականացրել աշխատանքները, և եթե կան պայմանագրից շեղումներ կապած ժամկետների հետ, տուգանքներ եղել են ,թե ոչ: Կապ հաստատել վերահսկող մարմինների հետ, տեսնել արդյոք իրենք տեղյակ են , առաջացած խնդիրներից և ինչ միջոցներ են ձեռնարկել դրանք վերացնելու համար: Հարցման արդյունքում տեղեկանալ արդյոք խողովակաշարը, որը օգտագործվել է խմեու ջրի համար, ունի լաբորատորիայի փորձաքննություն, և այն պիտանի է խմելու ջրի համար: Լաբորատորիայի պատասխանը ստանալուց հետո,(եթե այն դրական է) ,մենք նախատեսում ենք մեկ այլ լաբորատրիա դիմել համոզվելու համար արդյոք տվյալ խողովակաշարը պիտանի է խմելու չրի համար: Այդ ընթացքում նախատեսում ենք խմբային հանդիպումներ կազմակերպել համայնքի բնակիչների և փորձագետի հետ և պարզել թե իրենք ի՞նչ մտահոգություններ և դժգոհություններ ունեն, լսել փորձագետի կարծիքը և միասին ստեղծված իրավիճակի մասին գործողություններ

մշակել, որից հետո դիմել համապատասխան մարմիններին: Հնթացս համագործակցելու են որևէ կայքի լրագրողի հետ և պատրաստելու են ռեպորտաժ:

**«Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ**

**Հանրային վերահսկողություն՝ Որակի երաշխիք**

Հանրային վերահսկողության միջոցով, խթանել Լոռու մարզի Վանաձոր, Սպիտակ և Ալավերդի խոշորացված համայնքներում 2022-2023 թվականների, համայնքների զարգացմանը միտված սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքների տեխնիկական առաջադրանքների պահպանմանը: Ծրագրի խնդիրներից մեկը Վանաձոր, Սպիտակ և Ալավերդի խոշորացված համայնքներում 2022-2023թթ. սուբվենցիոն ծրագրերով իրականացվելիք աշխատանքների որակի վերահսկաման գործընթացի թափանցիկությանը նպաստելն է:

**«Ինֆորմացիոն կոմիտե» տեղեկատվական ՀԿ**

**Երևան քաղաքի գնումները. Կոռուպցիոն ռիսկերի ուսումնասիրություն և մատակարարվող ապրանք/ծառայության պայմանագրին համապատասխանելիության չափում**

Ուսումնասիրել Երևան քաղաքի գնումները՝ պոտենցիալ կոռուպցիոն ռիսկերի տեսակետից և չափել կատարված գնումների վերահսկողության արդյունավետությունը (արդյո՞ք գնված ապրանքը կամ ծառայությունը մատուցվել է պայմանագրով նախատեսվածժամկետներում, ծավալներով և որակով):

**«Դեղերի օգտագործման գիտական խումբ» ՀԿ**

**ՀՀ մարզերում ապակենտրոնացված կարգով իրականացվող դեղերի պետական գնումների ուսումնասիրությունը և վերլուծությունը**

Ուսումնասիրել և վերլուծել Շիրակի մարզի առողջապահական կազմակերպությունների դեղերի պետական գնումների 2023թ. փաստաթղթերը: Բացահայտել դեղերի ապակենտրոնացված պետական գնումների իրականացման ընթացքում առաջացող խոչընդոտները և իրավիճակը բարելավելու ուղղությունները, ինչպես նաև պետական գնումների թափանցիկության և հաշվետվողականության խթանման ուղիները: Ստուգել Շիրակի մարզի առողջապահական կազմակերպությունների կողմից 2024թ. ձեռք բերվող դեղերի համապատասխանությունը կազմակերպությունների պետական գնումների պլաններին և գնման հրավերով սահմանած տեխնիկական բնութագրերին: Մշակել դեղերի ապակենտրոնացված պետական գնումների բարելավմանն ուղղված՝ ապացույցների վրա հիմնված քաղաքականության առաջարկություններ և ներկայացնել որոշում կայացնողներին: Բարելավել հանրության իրազեկվածությունը դեղերի ապակենտրոնացված պետական գնումների վերաբերյալ:

## Հավելված 5. ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ծրագրի փորձագետի առաջարկությունները

Որոշման նախագծի 1-ին կետի (1) ենթակետով 2017թ. մայիսի 4-ի N526-Ն որոշման 50-րդ կետում առաջարկվող փոփոխության (2)-րդ կետը, որն սկսվում է «պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում» արտահայտությամբ, առաջարկում եմ խմբագրել հետևյալ կերպ. «Պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում պայմանագրի արդյունքի ընդունման գործընթացին պատասխանատու ստորաբաժանման (մասնագիտական խմբի) հետ համատեղ կարող են մասնակցել նաև Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունները և լրատվական գործունեություն իրականացնող անձինք: Պայմանագրի արդյունքի ընդունման գործընթացին Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունների և լրատվական գործունեություն իրականացնող անձանց մասնակցությունն ապահովելու համար արդյունքի ընդունումից 5 աշխատանքային օր առաջ պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագրի ընդունման օրվա, ժամի և վայրի մասին: Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունները և լրատվական գործունեություն իրականացնող անձինք իրենց կողմից լիազորված անձանց և իրենց կազմակերպության վերաբերյալ տվյալները (ֆիզիկական անձի անուն, ազգանուն, անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, իրավաբանական անձանց ռեգիստրում կազմակերպության գրանցման տվյալները), Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպության և լրատվական գործունեություն իրականացնող անձի ու նրանց կողմից լիազորված անձի շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը և կազմակերպության և լիազորված անձի կոնտակտային տվյալները (հեռախոսահամար և էլեկտրոնային փոստային հասցե) ուղարկում են պատվիրատուի նշած էլեկտրոնային փոստին: Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունները և լրատվական գործունեություն իրականացնող անձինք պատվիրատուի կողմից նշված էլեկտրոնային փոստային հասցեից ինքնաշխատ եղանակով ստանում են իրենց ուղարկած գրության ստացման վերաբերյալ էլեկտրոնային հաստատում, որում վերահաստատվում է պայմանագրի արդյունքի ընդունման օրը, ժամը և վայրը, նշում է պատվիրատուի այն պաշտոնատար անձի անունը, ով պատասխանատու է պայմանագրի արդյունքի ընդունման և այդ գործընթացին Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունների և լրատվական գործունեություն իրականացնող անձանց մասնակցության ապահովման համար, ինչպես նաև կցվում է պայմանագրի հավելված հանդիսացող տեխնիկական բնութագիրը: Պայմանագրի արդյունքի ընդունմանը Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունների և լրատվական գործունեություն իրականացնող անձանց կողմից լիազորված անձինք

ներկայանում են անձը հաստատող վավերական փաստաթղթով:» Առաջարկում եմ հանել նախագծի այդ ենթակետի մնացած տեքստը: Առաջարկում են հանել նույն կետի (2)-րդ և (3)-րդ ենթակետերը:

### Հավելված 6. ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական ՀԿ-ի առաջարկությունները

1) որոշման հավելվածի 50-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«50. Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի: Եթե կնքված պայմանագրի գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա կնքված պայմանագրի մասին հայտարարության մեջ նշվում է նաև, որ՝

1) դրանով սահմանված ժամկետում գնման տվյալ գործընթացին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցները կարող են պատվիրատուին ներկայացնել պայմանագրի արդյունքի ընդունման գործընթացին պատասխանատու ստորաբաժանման (մասնագիտական խմբի) հետ համատեղ մասնակցելու գրավոր պահանջ.

2) պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում պայմանագրի արդյունքի ընդունման գործընթացին պատասխանատու ստորաբաժանման (մասնագիտական խմբի) հետ համատեղ կարող են մասնակցել նաև լիազորված մարմնի կողմից վարվող ցուցակում ընդգրկված Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունները և լրատվական գործունեություն իրականացնող անձանց ներկայացուցիչները (այսուհետ՝ Դիտորդներ):

Դիտորդները պայմանագրի արդյունքի ընդունման գործընթացի օրվա, ժամի ու վայրի մասին կարող են տեղեկանալ պատասխանատու ստորաբաժանումից՝ հեռախոսով, կամ գրավոր հարցումն ուղարկելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գրավոր հարցումը ստանալու պահին դեռևս հայտնի չէ ընդունման գործընթացի օրը, ժամը ու վայրը, ապա այդ տեղեկատվությունը տրամադրվում է սույն կարգի 50.1 կետի 2-րդ ենթակետում սահմանված ժամկետում:

Ընդունման գործընթացին ներկայանալիս դիտորդը պարտավոր է ներկայացնել 50.2 կետում նշված վկայականը և իր անձը հաստատող փաստաթուղթ:»

2) որոշման հավելվածի 50.1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«50.1. Սույն կարգի 50-րդ կետով նախատեսված՝

1) գրավոր պահանջին կից ներկայացվում են՝

ա. ֆիզիկական անձին տրամադրված լիազորագրի բնօրինակը: Ընդ որում, լիազորված ֆիզիկական անձանց քանակը չի կարող գերազանցել երկուսը, իսկ լիազորված անձը անձամբ պետք է կատարի այն գործողությունները, որոնց համար լիազորված է:

բ. ինչպես գործընթացին մասնակցելու պահանջ ներկայացրած, այնպես էլ լիազորված ֆիզիկական անձանց կողմից ստորագրված բնօրինակ

հայտարարություններ՝ օրենքի 5.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված շահերի բախման բացակայության մասին.

գ. այն էլեկտրոնային փոստի հասցեները և հեռախոսահամարները, որոնց միջոցով պատվիրատուն կարող է կապ հաստատել պահանջը ներկայացրած անձի և վերջինիս կողմից լիազորված ֆիզիկական անձի հետ.

2) ժամկետը լրանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը կնքված պայմանագրի հայտարարության մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեից ծանուցում է ուղարկում սահմանված պահանջներին՝

ա. համապատասխանող գրություն ներկայացրած անձանց՝ պայմանագրի կատարման արդյունքի ընդունման գործընթացին վերջիններիս մասնակցությունը հաստատված լինելու մասին, ծանուցումը և սույն կետով նախատեսված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակից արտատպված օրինակները հրապարակելով նաև տեղեկագրում: Գործընթացին մասնակցության շրջանակում լիազորված ֆիզիկական անձի փոփոխությունն իրականացվում է սույն կետով սահմանված կարգով՝ պատվիրատուին ներկայացվող գրության հիման վրա.

բ. չհամապատասխանող գրություն ներկայացրած անձին՝ պայմանագրի կատարման արդյունքի ընդունման գործընթացին վերջինիս մասնակցությունը հաստատված չլինելու մասին, նշելով դրա համար հիմք հանդիսացած հանգամանքները:».

3) որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 50.2 կետով՝

50.2. Սույն կարգի 50-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցուցակում ընդգրկվելու համար Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունները և լրատվական գործունեություն իրականացնող անձինք լիազորված մարմին են ներկայացնում գրություն, կցելով՝

1) պետական գրանցման վկայականի պատճենը.

2) գործունեության իրականացման և էլեկտրոնային փոստի հասցեները, հեռախոսահամարը.

2) հանրային հսկողության գործընթացում ներգրավվելու նպատակով առաջադրվող ֆիզիկական անձանց (դիտորդների) տվյալները: Ընդ որում, ցուցակում ընդգրկելու նպատակով առաջարկվող անձանց քանակը չի կարող գերազանցել տասը.

3) առաջադրվող ֆիզիկական անձանց (դիտորդների) անունը ազգանունը, հանրային ծառայության համարանիշը, էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը.

4) հայտարարություն՝ շահերի բախման առկայության դեպքում պայմանագրի ընդունման գործընթացը չդիտարկելու պարտավորության մասին:

Լիազորված մարմինը սույն կետով սահմանված կարգով ներկայացված գրության հիման վրա առաջադրված անձին ցուցակում ներառում է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ այդ մասին վկայող համապատասխան վկայականներ տրամադրելով դիտորդներին: Վկայականի մեջ նշվում է, որ վկայականը տալիս է պայմանագրի կատարման ընդունումը դիտարկելու իրավունք, դրվում է Լիազոր մարմնի կնիքը, նշվում կազմակերպության

անվանումը, դիտորդի անունը և ազգանունը, ինչպես նաև վկայականի հերթական համարն:

Դիտորդներին ցուցակից հանելու կամ նոր անձի թեկնածություն ներկայացվելու դեպքում, չի ներկայացվում պետական գրանցման վկայականի պատճենը: Լիազորված մարմինը անձին ցուցակից հանում է գրությունը ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Դիտորդին ցուցակից հանելու դեպքում դադարեցնում է նաև վերջինիս՝ որևէ պատվիրատուի մոտ հանրային հսկողություն իրականացնելու իրավունքները:

Դիտորդների ցանկը հրապարակվում է լիազոր մարմնի տեղեկագրում: Ցանկի հրապարակված տարբերակում նշվում են միայն կազմակերպության անվանումը, դիտորդի անունը, ազգանունը և էլեկտրոնային փոստի հասցեն, ինչպես նաև լիազորված անձի կողմից նրան տրամադրված վկայականի հերթական համարը:

Դիտորդների կողմից սույն կարգը խախտելու դեպքում Լիազոր մարմինը կարող է ցուցակից հանել կարգը խախտած կազմակերպությանը կամ դիտորդին: Ցուցակից հանելու դեպքում տրամադրված վկայականը համարվում է ուժը կորցրած:

Պայմանագրի կատարման ընդունման գործընթացը դիտարկելիս դիտորդը իրավունք ունի իրականացնել տեսա-լուսանկարահանում և չափումներ, սակայն չխոչընդոտի ընդունման գործընթացին, ինչպես նաև չվնասի ընդունվող ապրանքը և չխոչընդոտի ընդունվող ծառայության մատուցմանը:

4) որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 50.3 կետով՝

«50.3. Սույն կարգի 50.2 կետում նշված ցանկում ներառված դիտորդները կարող են դիտարկել նաև շինարարական ծրագրերի կատարման ընթացքը հետևյալ նախապայմաններով՝

1) շինարարության տարածք այցելելիս դիտորդները պետք համապատասխան պահանջ ներկայացնեն պատասխանատու ստորաբաժանմանը, որը պետք է բավարարվի 2 աշխատանքային օրվա ընթացքում: Շինարարական տարածք այցելելու օրն ու ժամը սահմանում է պատասխանատու ստորաբաժանումը՝ համաձայնեցնելով այն կատարողի հետ (բայց ոչ ուշ, քան պահանջը ստանալուց հետո 4 աշխատանքային օրվա ընթացքում): Կառուցապատողի ու դիտորդի փոխադարձ համաձայնության դեպքում շինարարական տարածքի այցելությունը կարող է չհամաձայնեցվել պատասխանատու ստորաբաժանման հետ:

2) շինարարական տարածք այցելելիս դիտորդները պարտավոր են ներկայացնել 50.2 կետում նշված վկայականը և անձը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև կրել սաղավարտ և հետևել անվտանգության կանոնների պահպանման մասին կառուցապատողի հրահանգներին,

3) շինարարական տարածքի այցելությունը չպետք է խոչընդոտի շինարարական աշխատանքներին, այցելության տևողությունը, ինչպես նաև միևնույն կազմակերպության դիտորդների այցելությունների քանակը չպետք է դուրս գա քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին համապատասխանության ստուգման համար անհրաժեշտ ողջամիտ ծավալներից,

4) այցելության ընթացքում դիտորդները կարող են իրականացնել տեսա-վիդեո նկարահանում և չափումներ,

5) այցելության ընթացքում չպետք է վնասվի շինարարության տարածքում առկա գույքը կամ արդեն կատարված որևէ շինարարական աշխատանք»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: